ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«15» ապրիլ 2019 թ.

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հասցե՝ 1փողոց 17

pambak.lori@mta.gov.am

098-86-93-09

N 74

ՀՀ Լոռու մարզի մարզպետ
Ա. Ղուկասյանին

Ձեզ եմ ներկայացնում Փամբակ համայնքի ղեկավարի թիվ 05 որոշումը:
Առդիր 2 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Լ. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 05 » ապրիլ 2019 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 05

## Սեփականության իրավունքով Սևակ Խաչատրյանին, Տաթևիկ Ուլիխանյանին, Մերի Խաչատրյանին, Մոնիկա Խաչատրյանին պատկանող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, աստիճանահարթակը, ավտոտնակը և պարիսպը օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ''Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թվականի ,,Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թվականի թիվ 2387-Ն որոշումով և քանի որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել սեփականության իրավունքով պատկանող Սևակ Խաչատրյանին, Տաթևիկ Ուլիխանյանին, Մերի Խաչատրյանին, Մոնիկա Խաչատրյանին Փամբակ համայնքի վարչական տարածքում 06-1070150020 ծածկագրով 01291 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:
2. Սեփականության իրավունքով Սևակ Խաչատրյանին, Տաթևիկ Ուլիխանյյանին, Մերի Խաչատրյանին, Մոնիկա Խաչատրյանին պատկանող Փամբակ համայնքի վարչական տարածքում 06-1070150020 ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Փամբակ համայնք 2-րդ փողոց 3-րդ նրբ. տուն 3 փոստային հասցեն:
3. Օրինականացնել Սևակ Խաչատրյանին, Տաթևիկ Ուլիխանյանին, Մերի Խաչատրյանին, Մոնիկա Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնքի 2-րդ փողոց 3 նրբ. 3-րդ տուն հասցեում 06-1070150020 ծածկագրով 01291 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցած այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող , առանց քաղաքաշինական նորմերի ու կանոների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 13814 քմ արտաքին չափերով բնակելի տունը, 141 քմ արտաքին չափերով կիսանկուղը, 31.98 քմ բաց պատշգամբը, 5,7 քմ աստիճանահարթակը, 45,40 քմ արտաքին չափերով ավտոտնակը և 2,91 քմ պարիսպը:
4. Պարտավորեցնել Սևակ Խաչատրյանին, Տաթևիկ Ուլիխանյանին, Մերի Խաչատրյանին, Մոնիկա Խաչատրյանին 30 օրյա ժամկետում շինությունների օրինականացման համար համայնքին վճարել 190116 հհ դրամ՝ որից բնակելի տուն 75900 դրամ, կիսանկուղ 77550 դրամ, բաց պատշգամբ 17589 դրամ, աստիճանահարթակ 3135 դրամ, ավտոտնակ 14982 դրամ, պարիսպ 960 դրամ:

5. Սույն որոշումից բխող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում:
6. Պետական գրանցման համար հիմք է հանդիսանում սեփականատերերի կողմից համայնքին 190116 ՀՀ դրամի վճարման անդորրագրերը:

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան